

Ի ՅԻՍՆԵՐԵԱԿ ՅՈՒԵԼԻՆԻ ԱՄԱՅ

ԱՍՏՈՒԱԾԱԿՆԻՔ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻԻԶԵԱՆ

ԱՐՀԻԱՊԱՏԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՇԻՐԱԿԱՅ

ՏԱՂ

Երկինք , դու լրես քանի ձայնից արդեօք եռանդն
Հողեկանիս վրսեմութեանց յիշատակօք վառեալ ի խանդ ,
Իբր ըզխընկոց անուշաբոյրս ի հրակայծակն ցայտեալ բոցոյ ,
Հրաշափառ պարգևիդ ուխտք յերկինս ի վեր սլանան յարդոյ :

Ձերդ ի ծովէ այլեաց ի ծուփս պըղպըջակեալ շունչք բազմաբիւր
Ձինչ իցէ թէ՛ և իմս ինչ դոյզն՝ քեզ , Տէր , օրհնիւքս ելցէ փըրփուր .
Թէ առ մեծօք մեծ ևս չես , Տէր , և ոչ փոքումբս ինչ նուաստացիս ,
Հասարակաց բայց զի շնորհիդ հանուրբք տացին շնորհակալիս :

Ո՛վ դու վեհդ Արարչագործ , իբրև զի քե և հրաշանայ
Հուպ ի վերելս անդ քոց փառաց մարդոյ պատկերս այս դուզնաքեայ .
Որ երբեմն ըզբօ զընտրեալդ ի վեր Սինեայ առեալ բարձունս ,
Զայտիւքն ըզշնորհս քո դրոշմեալ կընքեցեր հուրք ըզգերաբունս :

Ո՛չ ըզնոյն արդ ըզտեսին և աստ առ մեօք հրաշացուցեր
Որ ոչ աւուրց ես ինչ խըտրող , յաւիտենիս իշխեցող Տէր .
Առեր քեզ և սըրբեցեր մարգարէ մեծ աստուածհաճոյ
Խօսել պատգամբս կենդանիս ժողովրդեան քում սիրելոյ .

Ի քոյում անդ տաճարի իբր ամբարձեալ ի նոր քորեր
Ոչ ի լոյս թուփ դալարուտ , այլ անձն իսկ իւր վառեալ հրակերպ .
Անդուստ իբր ի բովուց ոսկի ընտիր լուսաճաճանչ ,
Յարեաւ ոչ ևս մարդ հողածին , այլ հոգի հուր դէմք նորապանչ :

Մովսէս . . . — Եւ իցեն թիւք հրաշակերտից ձեռաց քոյին ,
Տէր , որ զաւազ աստեղաց փոշի ցըրիւ սըփուեր յերկին .[▲]—
Յայդ անուն կըրկին մըտացս ի հին աւուրսն տիպար ցուցաւ ,
Ի սքանչելեաց ճեմարանիդ , մին յարևելս , միւսն ընդ հարաւ :

Ի քորերայ մարգարէն մինչ կամս ի պիչ խորհըրդարեր ,
Անդ ընդ քօղովըն ծածուկ ըզխորենւոյն նկատեմ պատկեր .
Զոր տարացոյց օրինակի աստ առ մեօք ի միոյդ դէմս
Հրաշացուցեալ միաւորեր , Տէր , մին ըզմիով վեհ և վրսեմս :

Ո՛ , քանի սիրեցեալ քեզ ըստեղծուածս այս գերաշխարհիկ ,
Զի զշնորհացըդ կըրկնակի ի նմա զոգի հարեր կընիք ,

Կրրկին տախտակք աստուածագիծ անձրն սորա հոգերուն .
 Ի միում ճըշմարտութիւն , և յերկրորդին՝ սուրբ գիտութիւն :
 Աստուածընտիր դու Դիտապետ , ես որ առ շնորհսդ լուսածագող
 Հիասքանչ կամ և խօսիմ , ես որ բընաւ չեմ ինչ քերթող ,
 Քանի ևս ըզհայրենեաց վառիցես Դու այսօր զՈգին ,
 Որ զխաթարեալ փառըս նորուն ի յըստուերաց հաներ յերկին :
 Ո՛չ քե կուսանըն լուսագեղ Եկեղեցին Հայաստանեաց
 Յաստուածալոյս օծութենէդ ծընաւ որդւոց հոյս լուսազգեաց .
 Ո՛չ և բարբառս հայրենախօս այն ինչ ի դուրս ելեալ ժանդոյն ,
 Հարթեցան խիստ խընդբունդք մատանցդ ի յերկս անդեղւուն :
 Գոգ շընչեալ իմըն նորածնունդ աստ ի Բիւզանդ ըզսիւք օդոյն
 Չոր շընչեցին թարգմանք Հայոց ի պարայած անցիցն ի հուն .
 Եւ քե ուսաւ Հայկեան մանկտի երկարողի նորատիք
 Կակուղ ի հեգ մեղմ ի մընչիւն ըզսաստ ձայնին թեքել փափկիկ :
 Վաչ երջանիկ Յորելենիս . — անդ հայրենեաց որբ արտորայք
 Քե յոսկեզոյն պըճնեցան քըստմնածածան յատղք որայք .
 Հանգունակ պէս Բագրևանդայ սպիտակալի սուրբ ծերունւոյն
 Անպարապ մաշեցուցեալ զաւուրսդ ի գործ բազմաբեղուն :
 Աղէ կրրկին յիսներեակ նոր Մովսիսեանց օրինակիդ
 Ելցեն յերկնից ձիրս պարգևաց , զոր հայրենեացըդ ճըշմարիտ
 Յանկեղծ սըրտէ մաղթեն բերանք , շնորհակալու գովեստիւք ,
 Քաւ յանհանճար մախանաց , որ առ նախնեաւ քով չարաշուք :

Կոստանդնուպօլիս, յՕրբագիւղ, 18 Յունուարի 1869.

Հ. ՍՈՒՔԻԱՍ ՊԱՐՈՆԵԱՆ :

ՅԱՂԱԳՍ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՊՏԱՍՏՈՒ ԾԱՌՈՑ

Բ

Բռնաց սերնդեան հաւնար հարկաւոր
 եղա՞ ճնկդարար գործարաններ :

Ահա գարունը բացուեցաւ . ահա ա,
 միսներէ՛ ի վեր անկենդան կարծուած
 բուսական արարածոց բնութիւնը ըս-
 քանչելի արևուն շողն և կենդանարար
 ճառագայթներն ընդունելով եռալու և
 շարժելու վրայ են : Ամեն բոյս և տունկ՝
 ինչպէս գիշերակապ գերութենէ մը

արձակելով մէկը մէկու ետևէն արմատ
 ներէն ու աչքերէն դուրս պիտի պըլպըն
 տերևներ ու ծաղիկներ : Քիչ ատենի
 մէջ Հայոց մարգագետիններն ու բլուր-
 ները պիտի կանաչանան , քիչ օրի մէջ աչ-
 խարհներու գաւառներ ծաղկով պիտի
 հրճուին : Ահա ամենը՝ վայրի խոտ վայ-
 րի բանջար տունկ ծառ անտառ մամուռ
 քօս լօռ և այլ ինչ բուսական կայ՝ ա-
 մենքը համակամք և համազգած պի-
 տի՝ դիմեն օրինադիր բնութեան դրած
 պարտքը հատուցանելու : Արդէն զաֆ-
 րան ծաղիկը , մանուշակը , կովացնժուն՝¹

¹ Կովացնժու . աճ. Չոխա Լեւի . գլ. Prime-
 vère.